Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

203
Ш-61

774

280
931-3
1891

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ—ՄԱՐԳԱՐԵՆԱԿԱՆ

ԴՐԱԴԱՐԱՆ

Նուէր տ. Մարիամ Արամեանից՝ ի յիշատակ իւր հօր՝ բժ. Միսաք Արամեանի։

010

903
Ե-61
4055
280
931-3

# ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ

# ՍՐԲՈՑ ՊԱՏԱՐԱԳԻ

ՀԱՅ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Հ. Публичная Библиотека
7/XI 1922
Именна Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1005
67676
10279

## ԱՅԼ ԵՐԳՔ ՀՈԳԵՒՈՐՔ

### ԴՊՐՈՑՆԵՐԻ ԵՒ ԵՐԳԵՑԻԿ ԽՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԵՑ

Յ. Խ.

ՎԱԳԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԵԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

1891 — ՌՅԽԱ

31072-42

# ՀՐԱՄԱՆԱՒ
# ՍԻՆՕԳԻ

ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ

14140-58

## ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ

## ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

Ի զգեստաւորելն տահանայի.

Խորհուրդ խորին անհաս անսկիզբն,
Որ զարդարեցեր զվերին պետութիւնդ
Ի յառաջագոյն անմատոյց լուսոյն
Գերապանծ փառաւք զդասս հրեղինաց։
Անճառահրաշ զօրութեամբ
Ստեղծեր զԱդամ՝ պատկեր տիրական՝
Եւ նազելի փառաւք զգեստաւորեցեր
Ի դրախտն ադենի՝ տեղի բերկրանաց։
Զարչարանաւք քո սուրբ Միածնին
Նորոգեցան արարածք ամենայն,
Եւ վերստին մարդն անմահացաւ,
Զարդարեալ ի զգեստ անկողոպտելի։
Անձրևածին բաժակ հրահոսան
Որ հեղար յառաքեալսն ի սուրբ վերնատանն՝
Հէգ և ի մեզ՝ Հոգիդ Սուրբ Աստուած՝
Ընդ պատմուճանին զքո զիմաստութիւն։
Տան քում վայել է սրբութիւն՝
Որ զգեցար զվայելչութիւն
Սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ
Պատեա՛ զմէջս մեր ճշմարտութեամբ։
Որ զարարչագործ բազուկս քո
Տարածեցեր ընդդէմ աստեղաց՝
Հաստատեա՛ զբազուկս մեր կարողութեամբ

Համբարձմամբ Ձեռաց առ Քեզ միջնորդիլ։
Իրատմամբ թագ ի գլուխ պատեսցես զմիտս և զդայարանս,
Խաչանիշ ուրարմամբ ըստ Ահարոնի,
Ծաղկեալ յոսկեթել ի զարդ խորանի։
Բամից բոլորից սիրապէս աստուածպեսական
Նախորտապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր
Քո

ՀՈՒՇ՝ ՀԵՂԻ, Ե՛Վ ՅԱՐՏԵՂԵՆ ԱՂԵՂԱՆԱՅ, ԱՌԵՂՈՎ ԱՌՆՈՒ ԸՍՊ ՊԱՊՇԱՑԷ ԱՆՈՒՆ։

Սրէ՝ - Ալէլուիա օրթի։ Քհ՝ - Խաղաղութիւն։ Դպ՝ - Եւ ընդ Հոգւոյդ Քում։ Սրէ՝ - Երկիւղածութեամբ լուարուք։ Դպ՝ - Փառք Քեզ Տէր Աստուած մեր։ Սրէ՝ - Պռօսխումէ։ Դպ՝ - Ասէ Աստուած։

Ա՛-ԷՊՊՐԱՆ.

Դպ՝ - Փառք Քեզ՝ Տէր Աստուած մեր։

Հա՛-ՊՊՈՄԷ։

Քհ՝ - Իսկ մեք փառաւորեսցուք։ Սրէ՝ - Եւ ևս խաղաղութեան.

Դպ՝ - Տէր՝ ողորմեա։ Սրէ՝ - Եւ ևս հաւատով։ Դպ՝ - Կեցո՛՝ Տէր. Շնորհեա՛ Տէր (երիցս) Տէր ողորմեա՛՝ Քեզ Տեառնդ յանձն եղիցուք և այլն։

Սրէ՝ - Մի՛ ոք յերեխայից.

Դպ՝ - Մարմին Տէրունական և Արիւն Փրկչական կայ առաջի. երկնային զօրութիւնքն յաներևոյթս երգեն և ասեն անհանգիստ բարբառով. Սո՛ւրբ՝ սո՛ւրբ՝ սուրբ՝ Տէր զօրութեանց։

Սրէ՝ - Աղմոս ասացէք.

Դպ՝ - ՍՐԲԱՍԱՑՈ՛ՒՆ.

ԿԷ՛ՐՈՒԷՆ՝ ԵՎԷՂԷՑ՛՝ Ծ՛ՍՂԷՍՂԱՐԴԷ Ե՛Վ ՀԲԷՂՊԱԿԱՑ։

Մէյնակ. Հրեշտակային կարգաւորութեամբ լցեր՝ Աստուած՝ զՔո սուրբ զեկեղեցի։ Հազարք՝ (Խմբովքն) հազարաց հրեշտակապետք կան առաջի Քո՝ և բիւրք բիւրոց հրեշտակք պաշտեն զՔեզ՝ Տէր՝ և ի մարդկանէ հաճեցար ընդունիլ զօրհնութիւն՝ ձայնիւ խորհրդականաց. Սո՛ւրբ՝ սո՛ւրբ՝ սուրբ՝ Տէր զօրութեանց։

Սրէ՝ - Եւ ևս խաղ. Դպ՝ - Տէր ողորմեա։ Սրէ՝ - Եւ ևս հաւատով.

Դպ՝ - Կեցո՛՝ Տէր և ողորմեա. և այլն։



Սրէ՝ - Ողջոյն տուք միմեանց։

Դպ՝ - Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ՝
Որ էնն Աստուած ասա բազմեցաւ.
Խաղաղութեան ձայն հնչեցաւ՝
Սուրբ ողջունիս հրաման տուաւ.
Եկեղեցիս մի անձն եղև.
Համբայրս յօդ լրման տուաւ.
Թշնամութիւնն հեռացաւ՝
Սէրն յընդհանուրս ամրացաւ։
Ա՛րդ՝ պաշտօնեայք՝ բարձեալ զձայն՝
Տո՛ւք օրհնութիւն ի մի բերան
Միասնական Աստուածութեանն՝
Որում Սրովբէքն են սրբաբան։

Սրէ՝ - Ահիւ կայցուք՝ երկիւղիւ կայցուք.

Դպ՝ - Առ քեզ՝ Աստուած։

Սրէ՝ - Պատարագ Քրիստոս մատչի.

Դպ՝ - Ողորմութիւն և խաղաղութիւն և պատարագ օրհնութեան։

Սրէ՝ - Օրհնեա՛ Տէր։ Քհ՝ - Շնորհք՝ Սէր։ Դպ՝ - Ամէն և ընդ Հոգւոյդ Քում։ Սրէ՝ - Զգրունս՝ զգրունս։

Դպ՝ - Ունիմք առ Քեզ՝ Տէր ամենակալ։

Սրէ՝ - Եւ գոհացարուք զՏեառնէ։

Դպ՝ - Արժան և իրաւ։

Քհ՝ - Եւ ընդ սերովբէին։

Դպ՝ - Սո՛ւրբ՝ Սո՛ւրբ՝ սուրբ՝ Տէր զօրութեանց։ Լի են երկինք և երկիր փառաք Քո. օրհնութիւն ի բարձունս. օրհնեալ՝ որ եկիր և գալոցդ ես անուամբ Տեառն՝ ովսաննա ի բարձունս։

Քհ՝ - Առէք՝ կերէք՝ այս է Մարմին իմ։

Դպ՝ - Ամէն։

Քհ՝ - Արբէք իսմանէ՝ այս է Արիւն իմ։

Դպ. - Ամէն. Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո եառուր ի մահ վասն մեր՝ պարտապան պարտեաց մերոյ, հեղմամբ արեան Նորա, աղաչեմք զքեզ, ողորմեա՛ քո բանաւոր հօտի։

Քհ. - Եւ զքոյս ի քոյոց։

Դպ. - Յամենայնի օրհնեա՛լ ես, Տէր, օրհնեմք զքեզ. գովեմք զքեզ, գոհանամք զքէն, աղաչեմք զքեզ, Տէր Աստուած մեր։

Քհ. - Խաղաղութիւն ամ։ Դպ. - Եւ ընդ Հոգ։ Սրկ. - Աստուծոյ երկրպագեսցուք.

Դպ. - Առաջի քո, Տէր։ Որդի՛ Աստուծոյ, որ պատարագեալ Հօր ի հաշտութիւն հայց կենաց բաշխիս ի մեզ, հեղմամբ Արեան քո սուրբ, աղաչեմք զքեզ, ողորմեա՛ Արեամբ քով վրկեալ հօտի։

Սրկ. - Օրհնեա Տէր։ Քհ. - Որպէս զի եղիցի սա ամենեցուն։

Դպ. - Հոգի՛ Աստուծոյ, որ զփառակցի քո զիսորհուրդ, իջեալ ի յերկնից, կատարես ի ձեռս մեր, հեղմամբ Արեան Սորա, աղաչեմք զքեզ, հանգո՛ զհոգիս մեր ննջեցելոց։

Սրկ. - Օրհնեա Տէր։ Քհ. - Ընդ որս և մեզ այց արասցես։

Դպ. - Յիշեա Տէր և ողորմեա։ Քհ. - Աստուածածնին։

Դպ. - Յիշեա՛ Տէր և ողորմեա։ Սրկ. - Առաքելոց. Դպ. - Յիշեա՛, Տէր, և ողորմեա։ Սրկ. - Օրհնեա՛լ գովեալ։ Դպ. - Փառք յարութեան քո, Տէր։ Սրկ. - Սուրբ և Աստուածահաճոյ. - Առաջնորդացն. - Միանձնացելոցն. - Թագաւորաց. - Ընդհանուր։ Դպ. - Յիշեա՛ Տէր և ողորմեա։

Քհ. - Եւս առաւել զեպիսկոպոսապետն մեր և զպատուական Հայրապետն ամենայն Հայոց։ Սրկ. - Դոհութիւն։

Դպ. - Ը՛սա ամենայնի և յաղագս ամենեցուն։

Քհ. - Եւ եղիցի ողորմ։ Դպ. - Ամէն, և ընդ Հոգւոյդ քում։

Սրկ. - Եւ եւս խաղ. Դպ. - Տէր, ողորմեա։ Սրկ. - Ամենայն սրբոքով. - Վասն մնասուցեալ. - Որպէս զի. Դպ. - Տէր,



ողորմեա։ Սրկ. - Ընկալ կեցո՛։ Դպ. - Կեցո՛, Տէր, և ողորմեա՛։ Սրկ. - զԱմենասրբուհի։ Դպ. - Յիշեա՛, Տէր, և ողորմեա՛, Տէր ողորմեա, քեզ Տեառնդ յանձն եղիցուք։

Սրկ. - Օրհն։ Քհ. - Եւ տուր մեզ համարձակաձայն։

Դպ. - Հայր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո, որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր. թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի չարէ։

Սրկ. - Օրհն։ Քհ. - Զի քո է արքայ։ Դպ. - Եւ ընդ Հոգ։ Սրկ. - Աստուծոյ երկրպագ։ Դպ. - Առաջի քո Տէր։ Սրկ. - Օրհն։ Քհ. - Յիսուսիւ Քրիստոսիւ։ Սրկ. - Պռոսխսումէ։ Քհ. - Ի Սրբութիւն սրբոց։—

Դպ. - Միայն սուրբ, Միայն Տէր Յիսուս - Քրիստոս, ի փառս Աստուծոյ Հօր. Ամէն։ Սրկ. - Օրհն։ Քհ. - Օրհնեալ Հայր սուրբ Աստուած ճշմ։ Դպ. - Ամէն։ Քհ. - Օրհնեալ Որդիդ։ Դպ. - Ամէն։ Քհ. - Օրհնեալ Հոգիդ։ Դպ. - Ամէն։ Քհ. - Օրհնութիւն և փառք։ Դպ. - Ամէն. Հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ սուրբ։ Օրհնութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Քհ. - Ի սուրբ, ի սուրբ պատուական։

Դպ. - Տէր, ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա.

Արի՛, Աստուած հարցն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց,
Հաս յօգնութիւն ծառայից քոց՝
Անօգնական Ազգիս Հայոց։
Ամենասուրբ Երրորդութիւն,
Տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն,
Եկեղեցւոյ հաստատութիւն

Աղգիս Հայոց սէր միութիւն։
Ե՛կ, Տէր ցիսուս, ողորմեա՛ մեզ,
Ողորմութեան ժամ է արդէն.
Եկ, Բարեխնամ, այց արա մեզ,
Այցելութեան ժամ է արդէն։

Սրկ. - Սաղմոս ասացէք.

Դպ. - Օրհնեալ է Աստուած։ Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում. ալէլուիա։
Զմարմին իւր տայ մեզ կերակուր և սուրբ զԱրիւն իւր ցօղէ ի մեզ. ալէլուիա։
Մատիք առ Տէր և առէք զլոյս. ալէլուիա։
Ճաշակեցէք և տեսէք, զի քաղցր է Տէր. ալէլուիա։
Օրհնեցէք զՏէր յերկինս. ալէլուիա։
Օրհնեցէք զնա ի բարձունս. ալէլուիա։
Օրհնեցէք զնա, ամենայն հրեշտակք նորա. ալէլուիա։
Օրհնեցէք զնա, ամենայն զօրութիւնք նորա. ալէլուիա։

Սրկ. - Երկիւղիւ և հաւատով.

Դպ. - Աստուած մեր և Տէր մեր երևեցաւ մեզ, օրհնեալ եկեալ անուամբ Տեառն։

Քհ. - Կեցո՛, Տէր, զժողովուրդս Քո։

Դպ. - Լցաք ի բարութեանց Քոց, Տէր, ճաշակելով զՄարմին Քո և զԱրիւն։ Փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ, որ հանապազ կերակրես զմեզ։ Առաքեա՛ ի մեզ զՀոգեւոր Քո զօրհնութիւն. փառք ի բարձունս կերակրողիդ զմեզ։

Սրկ. - Եւ զա՛ խաղաղութեան։ Դպ. - Տէր ողորմեա։ Սրկ. - Եւ զա՛ հաւատով։

Դպ. - Գոհանամք զՔէն, Տէր, որ կերակրեցեր զմեզ յանմահական սեղանոյ Քո։ Բաշխելով զՄարմինդ և զԱրիւնդ ի փրկութիւն աշխարհի և կեանք անճանց մերոց։



Քհ. - Որ օրհնես զայնոսիկ։ Դպ. - Օրհնեալ է Աստուած։
Քհ. - Կեցո՛ զժողովուրդս. - Արքեա՛ զսոսա. - Զխաղաղութիւն. - Զի ամենայն տուրք։
Դպ. - Ամէն. Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեան (կրկնեա՛) և եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև յաւիտեան։
Քհ. - Աւետարան։ Սրկ - Ս. Խաչիւ։ Քհ. - Պահպանեա զմեզ։
Սրկ. - Օրհնեցիր։ Քհ. - Օրհնեալ եղերուք։

---

## Կանոն Շողակաթի Ս. Էջմիածնի.

Դէ. Էջ Միածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա, ձայնք հնչեցին սանդարամետք անգնդոց։

Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի, պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքայի։

Եկայք, շինեսցուք սուրբ զխորանն Լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս, ի Հայաստան աշխարհի։

---

## ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Երգ Տէառն Նէրսէսի Հայոց Կաթողիկոսի՝ ասացեալ ի պաշտամանն Գիշերոյ։

Ցիշեսցո՛ւք ի գիշերի զանուն Քո, Տէր։
Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի, և լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր թագաւորիդ։

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք զքեզ, Տէր։

Զաղօթս մեր տացուք քեզ, Տէր, ի գաւիթս քո, ի մէջ նոր Երուսաղէմի։

Ի գիշերի համբարձցուք զձեռս մեր սրբութեամբ առ քեզ, Տէր։

Ի ձայն գոհութեան, ամենայն հոգիք, օրհնեցէք զՏէր։

Զարթիք, փառք իմ, զարթիք և ես զարթեայց առաւօտուց, ալէլուիա։

Զարթիք ընդ զուարթունս, մանկունք վերինն Սիոնի, ալէլուիա։

Զարթիք, որդիք լուսոյ, ի յօրհնութիւն Հօրն լուսոյ, ալէլուիա։

Զարթիք, փրկեալք արեամբ, և տուք զփառս Փրկողին, ալէլուիա։

Զարթիք, Նոր ժողովուրդք, Նոր երգս առեալ Նորոգողին, ալէլուիա։

Զարթիք, հարսունք, հոգւով սպասեալք գալոյ սուրբ փեսային, ալէլուիա։

Զարթիք, վառեալք լուսով ըստ իմաստուն սուրբ կուսանացն, ալէլուիա։

Զարթիք, պատրաստեցէք իւղ լապտերաց զ�ջերմ արտասուս, ալէլուիա։

Զարթիք և մի ննջէք, նման յիմար կուսիդ նիրհէք, ալէլուիա։

Զարթիք երկիրպագցուք և արտասուօք զայս ասասցուք, ալէլուիա։

Զարթիր, ընդէր ննջես, Տէր, մի մերժեր զմեզ իսպառ։

Արի, Տէր, օգնեա մեզ, տացուք անուանդ փառս։

Այժմ և յաւէտ, Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն, ամէն։

---



Ն ո ր ի ն Տ. Ն ե ր ս ի ս Հ ա յ ո ց Կ ա թ ո ղ ի կ ո ս ի Է ր գ։

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առիս լոյս ծագեա։
Բղխումն ի Հօրէ,
Բղխեա ի Հոգւոյս
Բան քեզ ի հաճոյս։
Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ
Գտող զիս արա։
Դուռն ողորմութեան,
Դաւանողիս բաց,
Դասեցո վերնոցն։
Երրեակ միութիւն,
Եղելոց խնամող,
Եւ ինձ ողորմեա։
Զարթիր, Տէր յօգնել,
Զարթո զթմրեալս
Զուարթնոց նմանիլ։
Էդ Հայր անսկիզբն,
Էակիդ Որդի,
Է միշտ Սուրբ Հոգի։
Ընկալ զիս, գթած,
Ընկալ, Ողորմած,
Ընկալ, Մարդասէր։
Թագաւոր փառաց,
Թողութեանց տուող,
Թող ինձ զյանցանս։

Ժողովող բարեաց,
Ժողովեա և զիս
Ժողովս անդրանկաց։
Ի քէն, Տէր, հայցեմ,
Ի Մարդասիրէդ
Ինձ բժշկութիւն։
Լեր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս,
Լուծանող ցաւոյս։
Խորհրդոյ գիտող։
Խաւարիս շնորհեա
Խորհուրդ լուսաւոր։
Ծնունդ Հօր ծոցոյ,
Ծածկելոյս ստուերաւ
Ծագեա զլոյս փառաց։
Կենարար Փրկիչ,
Կեցո զմեռեալս,
Կանգնեա զգլորեալս։
Հաստեա հաւատով,
Հաստատեա յուսով,
Հիմնեցո սիրով։
Զայնիւս աղաչեմ,
Զեռաքս պաղատեմ,
Զիր բարեաց շնորհեա։
Ղամբարամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո։

Ճառագայթ փառաց,
Ճանապարհ ինձ ցոյց,
Ճեպել ի յերկինս։
Միածինդ Հօր,
Մոյծ զիս յառագաստ
Մաքուր հարսանեացդ։
Յորժամ գաս փառօք
Յահագին աւուրն
Յիշեա՛ զիս, Քրիստոս։
Նորոգող հնութեանց,
Նորոգեա՛ և զիս,
Նորոգ զարդարեա՛։
Շնորհատու բարեաց,
Շնորհեա՛ զքաւութիւն,
Շնորհեա՛ զթողութիւն։
Ուրախացո՛, Տէր,
Ոգւոյս փրկութեամբ,
Ոյր վասն եմ ի սուգ։
Զար մշակողին,
Զար սերմանց նորին
Զորացո՛ զպտուղն։
Պարգևիչ բարեաց,
Պարգևեա՛ իմոց
Պարտեաց թողութիւն։
Զուր շնորհեա՛ աչացս
Ջերմ հեղուլ զարտօսր,
Ջնջել զյանցանս։

Ռետինդ քաղցու
Ռամ հոգւոյս արբո՛,
Ռահ ցոյց ինձ լուսոյ։
Սէր անուն Յիսուս,
Սիրով Քով ճմլեա՛
Սիրա՛ իմ քարեղէն։
Վասն ողորմութեան
Վասն գթութեան
Վերստին կեցո՛։
Տենչալոյդ տեսլեամբ
Տուր ինձ յագենալ,
Տէր Յիսուս-Քրիստոս։
Բաբունդ երկնաւոր
Բոտեա՛ զաշակերտս
Բամից երկնայնոց։
Յօղ արեան Քոյ, Տէր,
Յօղեա՛ իհոգիս,
Յնծասցէ անձն իմ։
Իւծեալս մեղօք
Իւծեալ աղաչեմ
Իւսել ինձ բարիս։
Փրկիչ բոլորից
Փութա՛ զիս փրկել
Փորձութեանց մեղաց։
Քաւիչ յանցանաց,
Քաւեա՛ զօրհնաբանս
Քեզ երգել զփառս։

Սրբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ։
Յիշեա՛, Տէր և ողորմեա՛։



## Երգ ի-ղաքէրէից Ա-էրաբոնին։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ ի յայսմհետէ մինչև ի յաւիտեան։

Օրհնեցէք, մանկունք, զՏէր և օրհնեցէք զանունն Տեառն։

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչև ի յաւիտեան։ Յարևելից մինչև ի մուտս արևու օրհնեալ է անուն Տեառն ի յայսմհետէ մինչև ի յաւիտեան։

Փառք և երկրպագութիւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն, ի յայսմհետէ մինչև ի յաւիտեան։

Արի՛, Տէր, օգնեա՛ (Ղեյնակ)։

## Զկնի ի-ղաքէրէից Ա-էրաբոնին։

Փա՜ռք յարութեան Քո՝, Տէր, ոչ դադարեցայց, Քրիստոս, օրհնել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ։

Փա՜ռք յարութեան Քո՝, Տէր, ոչ դադարեցայց, Յիսուս, գովել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ։

Եւ ոչ դադարեցայց, Փրկիչ, փառաւորել զքեզ զամենայն աւուրս կենդանութեան իմոյ։

Ի գիշերի համբարձէք զձեռս ձեր ի սրբութիւն և օրհնեցէք զՏէր։

Աստ օրհնեցէք, ամենայն ծառայք Տեառն, զՏէր ի սրբութիւն և օրհնեցէք զՏէր։

## Օրհնություն աստուածպաշտության

Փա՜ռք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, մարդիկ հաճութիւն։ Եւ օրհնութիւն քեզ ի բարձունս, օրհնեա՜լ ես, Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և գովեմք զքեզ։ Խոստովանիմք Տէր զքեզ և երկիրպագանեմք քեզ, փառաւորեմք զքեզ. գոհանամք, Տէր զքէն վասն մեծի փառաց քոյ։ Տէր թագաւոր, սուրբդ երկնային, Աստուած և Հայր ամենակալ։ Տէր և Որդի Հօր՝ Միածին Յիսուս-Քրիստոս և սուրբ Որդի։ Տէր Աստուած, գառն Աստուծոյ և Որդի Հօր, որ առեր զմեղս ի կուսէն։ Ողորմեցար, բարձեր զմեղս աշխարհի, և արդ ընկալ զաղաչանս մեր. Սուրբդ, որ նստիս ընդ աջմէ Հօր, ողորմեա՛ց մեզ, զի Դո՛ւ միայն սուրբ, Դո՛ւ միայն բարձրեալ ես, Դու միայն Տէր մեր Յիսուս-Քրիստոս։ Տէր և Հոգիդ Սուրբ, որ ի փառս Աստուած ընդ Հօր. ամէն։

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ, Տէր, և գովեմք զանուն սուրբ քո յաւիտեանս և յաւիտեանս յաւիտենից։ Արժանի արա՛, Տէր, զօրս զայս խաղաղութեամբ և առանց մեղայ պահեա՛ զմեզ։ Օրհնեալ ես, Տէր Աստուած հարցն մերոյ, գովեալ և փառաւորեալ է անուն սուրբ քո յաւիտեանս, ամէն։ Օրհնեալ Տէր, ուսո՛ ինձ զարդարութիւնս քո (Երէց՝ կրկնէ՛)։ Տէր, ապաւէն եղեր մեր յազգէ յազգ։ Ես ապաւեմ Տէր, ողորմեա ինձ և բժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ քեզ։ Ցոյց մեզ, Տէր, զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո տուր մեզ։ Տէր, ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ։ Տէր իմ, զքեզ ապաւէն ինձ արարի. ուսո՛ ինձ առնել զկամս քո, զի Դու ես Աստուած իմ։ Ի քէն է, Տէր, աղբիւր կենդանութեան, և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս։ Ծագեա՛ զողորմութիւնս քո, որք ճանաչեն զքեզ, Տէր։

---



Նորաստեղծեալ բանն յանէից
Իսկզբանէ զերկինս երկնից,
Եւ զերկնային զօրս անմարմնոց
Իմանալեացն զուարթնոց
Եւ զգալի տարերց քառից
Հակառակաց միաբանից,
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնն անճառելի։
Երեքսրբեան մի տէրութիւն
Միով բնութեամբ Աստուածութիւն,
Լոյսն որ անեղ արարչական
Ասաց լինիլ լոյս եղական,
Զոր և ծագեաց յօրն առաջին
Միաշաբաթ կիւրակէին.
Որով յաւէտ փառաբանի
Երրորդութիւնն անճառելի։
Բաբունօրէն բացատրեսցուք,
Զծածկեալ խորհուրդն ծանիցուք,
Զի լոյսն անտես իմանալի,
Մաքուր հոգւոց տեսանելի
Ի սոյն ծագեաց միաշաբաթ
Մեզ յարութեան սուրբ ճառագայթ.
Եկայք, փրկեալք ընդ զուարթնոյն,
Տո՛ւք օրհնութիւն յարուցելոյն։
Սէրդ սիրով խոնարհեցար,
Ի փրկութիւն մեր մարմնացար,
Նովին մարմնովն խաչեցար,
Ի գերեզման մահու եղար.
Այսօր յարեար աստուածաբար
Ի հրեշտակաց քարոզեցար.

Եկայք փրկեալք՝ ընդ զուարթնոյն
Տո՛ւք զօրհնութիւն յարուցելոյն։
Երևեցար խնկաբերիցն
Ցողջոյն կենաց ուրախալից՝
Եւ ի լերինն Գալիլեայ
Առաքելոց մետասանից.
Արժանացո զմեզ ընդ նոսին
Զքեզ տեսանել յօրն վերջին.
Եկայք՝ փրկեալք՝ ընդ զուարթնոյն
Տո՛ւք օրհնութիւն յարուցելոյն։
Սիօնի որդիք՝ զարթիք՝
Հարսին լուսոյ տո՛ւք աւետիք
Եթէ փեսայն քո յարուցեալ
Ցաղթեաց մահու իշխանութեամբ.
Գայ պսակէ զքեզ փառօք.
Ե՛լ ընդառաջ պճնեալ զարդուք.
Երգեա՛ երգ նոր յարուցելոյն՝
Ննջելոց կենաց պտղոյն։

---

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ.

ՑԵՐԵԿՈՅՍ ՀԷՐԱԿԱԾՈՒՆ.

Ա՛յ. Սուրբ ես՝ Տէր զօրութեանց՝ որ բնակեալդ ես ի յերկինս և բարեբանիս ի սրբոց քոց։

Երկնա՛յին զօրութիւնքն սերովբէք և քերովբէք՝ անդադար օրհնեն սուրբ զանունդ քո։

Քահանայք ընդ նոսին պաշտոնեայք և ժողովուրդք երկրպագեսցուք տէրութեանդ քո։

14140-29
14140-89
(1005)
60676



Լոյսդ՝ որ յառաջ քան զյաւիտեանս՝ ի հօրէ առաքեցար և լուսով իմանալեաւ լցեր զարարածս. օրհնեա՛լ ես՝ թագաւոր յաւիտենից։

Որ զլոյս իսկզբանէ հաստատեցեր վերստին՝ և զիսաւարն անգիտութեան յարութեամբդ քո հալածեցեր. օրհնեա՛լ ես՝ թագաւոր յաւիտենից։

Ուստի և մեք լուսաւորեալքս ընդ լուսեղէն զուարթնոցն՝ երգեսցուք ցնծութեամբ ի յարութեան երեկոյիս. օրհնեա՛լ ես՝ թագաւոր յաւիտենից։

Երկնաքաղաքացին Յովհաննէս՝ մեծն ի ծնունդս կանանց՝ քարոզէր յանապատի աղդարարող բարբառովն զծագումն լուսոյ արեգականն արդարութեան։

Ճշմարիտ մարգարէ և ձեռնադրող Որդւոյն Աստուծոյ՝ յառաջընթաց կարապետ և պատմող աստուածային օրինաց՝ հորդէր ճանապարհս թագաւորին յաւիտենից։

Յանօրէն գինարբուսն մոլեգնեալ Հերովդիադա ի պարգևի մասին ինդրէր զգլուխս մարգարէին՝ շիջուցանել զարուսեակն և զանաղօտ լապտերն։ Փառք հօր։

Որբուհւոյ Աստուածածնին բարեխօսութեամբ պարգևեա երկրպագուացս ամենասուրբ երրորդութեանդ՝ զյարութիւնդ յուսոյ կենացն յաւիտենից։

Ա՛յժմ և միշտ։ Զհաւատացեալ ժողովուրդս սուրբ երրորդութեանդ և զապաւինեալ ի խորանս փառաց քոց պահեա՛ անխռով ի խաղաղութեան։

Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.R.A. Публичная Библиотека
7/31 1922
Мясникян
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ա՛յ. Քանզի զքեզ օրհնեն իշխանութիւնք երկնից՝ թագաւոր փառաց՝ ամենակալ՝ ամենակարող՝ թող զմեզս մեր

ննջեցելոցն, և հանգո՛ ի խորանի քում ի յարքայական ի հանգստեան։

Որ ի նախնումն զմարգարէն Մովսէս լուսաւորեցեր աստուածային փառաւք տեսլեամբ Աստուածութեանդ քոյ, լուսաւորեա՛ և զմեր զննջեցեալսն և հանգո՛ ի խորանի քում ի յարքայական ի հանգստեան։

Բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնի՝ ծնողի և Մօր քոյ, յիշեա՛ զգինս արեան քոյ, Տէր, և դասաւորեա՛ յերանաւէտ, յանթառամ և յանտրտում ի կեանսդ, ի յարքայական ի հանգստեան։

—Փառք քեզ, Հայր որ կենարարդ ես մարմնոց և գոյացուցիչ հոգւոց, ընկալ զօրհնաբանող հոգիս յանմահական քո հանգիստ։

Մարդասիրի Հօր Որդի, որ պատկերակից եղեր հողեղինացս և խաչեցար, ընկալ զօրհնաբանող հոգիս յանմահական քո հանգիստ։

Ամենազօր սուրբ Հոգի, որ անգորրիչ ես նեղելոց, և մխիթարիչ հոգւոց, ընկալ զօրհնաբանող հոգիս յանմահական քո հանգիստ

—Զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք։

Որ զբանն Աստուած յարգանդի կրեցեր, Սրբուհի անարատ և անճառապէս ծնար զվերաձգողն երկնից, զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք։

Որ էիր լուսոյն արժանի եղեր բառնալոյ ի քո գիրկս, և արեգական արդարութեան եղեր արևելք, զքեզ օրհնութեամբ մեծացուցանեմք։

—Զօրութիւն սուրբ խաչի քոյ, Քրիստոս, որ կանգնեցեր ի վրկութիւն աշխարհի, սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ։

Քանզի ի սմա բարձրացար, Աստուած, և ի սմա հեղեր



զպատուական սուրբ զարիւնդ, սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ։

Եւ զքո միւսանգամ զգալուստդ նշանաւ խաչի քոյ ցուցեր աշխարհի, սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ։

Փառաց ի փառս բարձրանան
Ալքակողմեանքն վերանան,
Յորժամ լսեն զերանական
Զայն օրհնութեան ի քեզ կոչման
Ննջեցեալս մեր լսեցո՛
Զաստուածային բարբառս քո,
Դասաւորեա՛ զսա վերնոցն՝
Երգել՝ քեզ փառս ընդ զուարթնոցն։
Քահանայք և ժողովուրդք
Հայցեմք ի քէն, Տէր բարեգութ,
Ընդ ննջեցեալսն հաւատով
Ընկալ զսա նովին յուսով
Յերուսաղէմ քաղաք վերին,
Յորում արդարքն ժողովին,
Փառս վերերգել միշտ ընդ նոսին
Երրորդութեանդ երրեակ անձին։

—Ի վերին Երուսաղէմ, ի բնակարանս հրեշտակաց, ուր Ենովք և Եղիաս կան ծերացեալք աղաւնակերպ ի դրախտին եդեմական, պայծառացեալ արժանապէս, ողորմած Տէր, ողորմեա՛ հոգւոցն մեր ննջեցելոց։

---

## ԿԱՆՈՆ ՁՐՕՐՀՆԵԱՑ։

Ք՝. Լոյս ի լուսոյ, ի Հօրէ առաքեցար և մարմնացար ի սուրբ Կուսէն, զի վերստին նորոգեսցես զապականեալն Ադամ։

Դո՜ւ Աստուած ի յերկրի երևեցար և ընդ մարդկան շրջեցար և փրկեցեր զտիեզերս յանիծիցն Ադամայ։

Քեզ ի յերկնից վկայեալ Հօր քոյ ձայն, ասէ. Դա է իմ Որդի, և սուրբ Հոգին զքեզ յայտնեաց աղաւնակերպ երևմամբ։

Զքեզ, որ հոգւով և հրով մաքրեցեր զմարդկան աղտեղութիւն, որպէս զԱստուած և զփրկիչ ամենեքեան օրհնեսցուք։

Փրկիչն երևեցաւ՝ և զաշխարհս ապրեցոյց ի պատրանաց թշնամւոյն, որդեգրութիւն շնորհելով ի ձեռն մկրտութեան։

Հրով կիզու զմեզս մեր այսօր երևեալ Ապրեցուցիչն և զովացուցանէ զաշխարհս աստուածային ջրովն։

Զգլուխս վիշապին փրկիչն ջախջախեաց ի Յորդանան գետն, և ինքեան իշխանութեամբ զամենեսեան ապրեցոյց։

Զհին մարդն նորոգելով, փրկիչն ի մկրտութիւն գայ այսօր, զի զապականեալ զբնութիւնս ջրով նորս գործեսցէ, անապական զգեստ փոխարէն տալով մեզ։

Մկրտի Քրիստոս և սրբին արարածք ամենայն, և տայ մեզ թողութիւն մեղաց, ջրով և հոգւով վերատրբելով զմեզ։

---

Ե Ր Գ.

Ո՞վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ,
Արարիչն Աստուած ի Յորդանան եկեալ,
Կամէր մկրտիլ ի ծառայէն իւրմէ,
Զաւնոյր կարապետն զմկրտիչն ի յանձն։
Յորդանան լուեալ՝ փախստական դառնայր,
Վտակ առ վտակ պատգամաւոր լինէր։
Գե՜տ, մի զարհուրիր, քո Արարիչն եմ ես,



Եկեալ մկրտիմ և լուանամ զմեղս։
Զիսուս յառաջեաց աստուածութեամբ ի ջուրն,
Հանդերձ Յովհաննու Աստուած ի գետն եմուտ։
Երկինք պատառեալ, ձայն ի վերուստ իջեալ,
Զայն որ ի բարձանց, որ վկայեաց Որդւոյ.
Դա է իմ Որդի, ընդ որ հաճեցայ, ասէ,
Դմա լուարուք, որդիք մարդկան, ձայնէր։

---

Այսօր ձայնն հայրական յերկնից իջեալ հաճոյական, սիրեցելոյ Որդւոյ վկայ, ա՜յ յորդորէ, գե՜տ յորդորէ գետ Յորդանան. յորդորական ձայնիւ երգէր մեծ Կարապետն Յովհաննէս։

Այսօր Հոգին իջեալ աղաւնակերպ և նիւթեղէն հրեղէն լեզուօք ձայնեալ ի քեզ ս. Յորդանան. այ յորդորէ . . . .

Այսօր ցնծացաւ Զաքարիաս քահանայիւք և զուարճացան եկեղեցիք հեթանոսաց. այ յորդորէ . . . .

Այսօր Կարապետն Յովհաննէս խայտայր ցնծայր տեսանելով զԱստուածորդին իջմամբ ի ջուրն, այ յորդորէ, գետ յորդորէ . . . ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

774